ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Միլլեննիում Ֆորս-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/75 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
6	Մեկտեղանի մահճակալ՝ Էլեգիա կամ Ստոլլայն կամ Իմպերիալ կամ Մեբելգրադ ապրանքանիշերի։ Մահճակալի արտաքին չափսերը պետք է լինեն՝ ոչ ավել քան (Լ x Բ x Խ) 95 x 105 x 210 սմ, իսկ քնելու մասի չափը ոչ ավել քան 90 x 200սմ, (Համապատասխան ստանդարտ մեկտեղանոց ներքնակի չափին)։ Մահճակալի կառուցվածքային հիմքը պետք է պատրաստված լինի որակյալ լամինացված փայտասալից (ԼԴՍՊ), որն ապահովում է բարձր մեխանիկական ամրություն, մաշվածակայունություն և երկարաժամկետ շահագործման հուսալիություն։ Արտաքին երեսպատման և տեսանելի հատվածների նյութը պետք է լինի ՄԴՖ՝ ապահովելով գեղագիտական բարձր որակ, հարթ մակերես և ինտերիերային համապատասխանություն։ Կահույքի արտադրության հիմքում կիրառվող լամինացված ԼԴՍՊ-ն պետք է համապատասխանի գործող տեխնիկական նորմերին և ապահովի ինչպես կառուցվածքային կայունություն, այնպես էլ արտաքին տեսքի պահպանություն շահագործման ամբողջ ընթացքում։ Մահճակալը կարող է չներառել հագուստի կամ այլ պահեստավորման ներքին հատված, սակայն պարտադիր բաղադրիչ է համարվում համապատասխան չափսի ներքնակի առկայությունը։ Ներքնակը պետք է համապատասխան լինի 90 × 200 սմ չափին և ամբողջությամբ ապահովի օգտագործման հարմարավետություն։ Գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ։ Ապրանքը շահառուի հասցե պետք է մատակարարվի քանդված վիճակում՝ ամբողջական կցամասերով և մոնտաժման համար անհրաժեշտ բոլոր բաղադրիչներով։ Փաթեթավորումը պետք է լինի գործարանային, ստվարաթղթե և պաշտպանիչ շերտերով ապահովված, որտեղ յուրաքանչյուր տարր լրացուցիչ պաշտպանված կլինի հաստ թղթով, փրփրապատ կամ այլ հարվածամեղմող

	նյութերով՝ տեղափոխման ընթացքում հնարավոր մեխանիկական վնասները բացառելու նպատակով։Մահճակալի հավաքումն իրականացվելու է շահառուի բնակարանում՝ մատակարարի միջոցներով և պատասխանատվությամբ։ Մատակարարի կողմից պարտադիր է տրամադրել առնվազն 6 (վեց) ամիս երաշխիքային սպասարկում։ Մատակարարման պահին արտադրողը կամ մատակարարը պարտավոր է ներկայացնել համապատասխանության հավաստագրեր և սերտիֆիկատներ, որոնք հաստատում են ապրանքի համապատասխանությունը գործող տեխնիկական կանոնակարգերին, անվտանգության և որակի ստանդարտներին։ Մատակարարումը կատարել անհրաժեշտ քանակներով՝ պատվիրատուի նախնական պահանջի (հայտի) հիման վրա՝ այն ներկայացվելուց հետո 3-օրյա ժամկետում։ Նախնական հայտը ներկայացվում է էլեկտրոնային փոստի միջոցով։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Միլլեննիում Ֆորս ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/75 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
6	